# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2020 թվականի N 1237 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

-------------------------------------------------------------------------------------------------------------

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. 2020 թվականի հուլիսին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում հրետակոծությունից տուժած բնակիչներին հասցված վնասների վերացմանը պետական ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին հատկացնել 25,000.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով):

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշման NN 3, 4, 5, 9 և 9.1 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

3. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին սույն որոշման շրջանակներում ապրանքի, աշխատանքի, ծառայությունների գնումներն իրականացնել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջներին համապատասխան՝ մեկ անձից գնումներ կատարելու ընթացակարգով՝ չկիրառելով կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության, 32-րդ կետի 5-րդ ենթակետի, 71-րդ կետի 1-ին ենթակետի, 114-րդ կետի 2-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

4. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին՝ 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման N 10 հավելվածում կատարել սույն որոշումից բխող փոփոխություններ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ　　　　　　　　Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. հուլիսի 28
Երևան



Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
հուլիսի 23-ի N 1237 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 2 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Ծրագրային դասիչը | | Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների, ծրագրերի և միջոցառումների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | |
|---|---|---|---|---|
| ծրագիրը | միջոցառումը | | ինն ամիս | տարի |
| | **ՀՀ կառավարություն** | | | |
| 1139 | | *Ծրագրի անվանումը* | *(25,000.0)* | *(25,000.0)* |
| | | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | | |
| | | *Ծրագրի նպատակը* | | |
| | | Պետական բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ծախսերի ֆինանսավորման ապահովում | | |
| | | *Վերջնական արդյունքի նկարագրությունը* | | |
| | | Պահուստային ֆոնդի կառավարման արդյունավետություն և թափանցիկություն | | |
| | | Ծրագրի միջոցառումներ | | |
| | 11001 | *Միջոցառման անվանումը* | *(25,000.0)* | *(25,000.0)* |
| | | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | | |
| | | *Միջոցառման նկարագրությունը* | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ՀՀ պետական բյուջեում նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման՝ պետական բյուջեում չկանխատեսված ելքերի, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի ֆինանսավորման ապահովում | | |
| | | *Միջոցառման տեսակը* | | |
| | | Ծառայությունների մատուցում | | |
| | **ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** | | | |
| 1212 | | *Ծրագրի անվանումը* | *25,000.0* | *25,000.0* |
| | | Տարածքային զարգացում | | |
| | | *Ծրագրի նպատակը* | | |
| | | Տարածքային համաչափ զարգացման խթանում | | |
| | | *Վերջնական արդյունքի նկարագրությունը* | | |
| | | ՀՀ համայնքների կառավարման արդյունավետության բարձրացում և տնտեսական գործունեության խթանում | | |
| | | Ծրագրի միջոցառումներ | | |
| | 12013 | *Միջոցառման անվանումը* | *25,000.0* | *25,000.0* |
| | | Հրետակոծության հետևանքով հասցված վնասների փոխհատուցում | | |
| | | *Միջոցառման նկարագրությունը* | | |
| | | Հրետակոծության հետևանքով ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներին (բնակիչներին) հասցված վնասների փոխհատուցում | | |
| | | *Միջոցառման տեսակը* | | |
| | | Տրանսֆերտների տրամադրում | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

1237 (1)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
հուլիսի 23-ի N 1237 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ NN 3 ԵՎ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Գործառական դասիչը | | | Ծրագրային դասիչը | | Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների, ծրագրերի, միջոցառումների և միջոցառումները կատարող պետական մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | ծրագիրը | միջոցառումը | | ինն ամիս | տարի |
| | | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **0.0** | **0.0** |
| 11 | | | | | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ** | ***(25,000.0)*** | ***(25,000.0)*** |
| | | | | | այդ թվում՝ | | |
| | 01 | | | | **ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ** | ***(25,000.0)*** | ***(25,000.0)*** |
| | | | | | այդ թվում՝ | | |
| | | 01 | | | **ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ** | ***(25,000.0)*** | ***(25,000.0)*** |
| | | | | | այդ թվում՝ | | |
| | | | | | **ՀՀ կառավարություն** | **(25,000.0)** | **(25,000.0)** |
| | | | 1139 | 11001 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | *(25,000.0)* | *(25,000.0)* |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | այդ թվում՝ ըստ կատարողների | | |
| | | | | | *ՀՀ կառավարություն* | *(25,000.0)* | *(25,000.0)* |
| | | | | | այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ | | |
| | | | | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ | *(25,000.0)* | *(25,000.0)* |
| | | | | | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ | *(25,000.0)* | *(25,000.0)* |
| | | | | | ԱՅԼ ԾԱԽՍԵՐ | *(25,000.0)* | *(25,000.0)* |
| | | | | | Պահուստային միջոցներ | *(25,000.0)* | *(25,000.0)* |
| 01 | | | | | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | ***25,000.0*** | ***25,000.0*** |
| | | | | | այդ թվում՝ | | |
| | 08 | | | | **Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ** | ***25,000.0*** | ***25,000.0*** |
| | | | | | այդ թվում՝ | | |
| | | 01 | | | **Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ** | ***25,000.0*** | ***25,000.0*** |
| | | | | | այդ թվում՝ | | |
| | | | | | **ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն** | | |
| | | | 1212 | | **Տարածքային զարգացում** | **25,000.0** | **25,000.0** |
| | | | | 12013 | **Հրետակոծության հետևանքով հասցված վնասների փոխհատուցում** | **25,000.0** | **25,000.0** |
| | | | | | այդ թվում՝ ըստ կատարողների | | |
| | | | | | ՀՀ Տավուշի մարզպետարան | 25,000.0 | 25,000.0 |
| | | | | | այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ | | |
| | | | | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ | 25,000.0 | 25,000.0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ | 25,000.0 | 25,000.0 |
| | | | | | **ԱՅԼ ԾԱԽՍԵՐ** | 25,000.0 | 25,000.0 |
| | | | | | **ԱՅԼ ԾԱԽՍԵՐ** | 25,000.0 | 25,000.0 |
| | | | | | **Այլ ծախսեր** | 25,000.0 | 25,000.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2020 թվականի
հուլիսի 23-ի N 1237 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 9 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 9.47 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՀՀ կառավարություն**

## ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| **Ծրագրի դասիչը** | **Ծրագրի անվանումը** |
|---|---|
| *1139* | *ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ* |

**Ծրագրի միջոցառումները**

| Ծրագրի դասիչը | *1139* | Ցուցանիշների փոփոխությունը (նվազեցումները նշված են փակագծերում) | |
|---|---|---|---|
| Միջոցառման դասիչը | *11001* | ինն ամիս | տարի |
| Միջոցառման անվանումը | *ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ* | | |
| Նկարագրությունը | *ՀՀ պետական բյուջեում նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման՝ պետական բյուջեում չկանխատեսված ելքերի, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի ֆինանսավորման ապահովում* | | |
| Միջոցառման տեսակը | *Ծառայությունների մատուցում* | | |
| Միջոցառումն իրականաց-նողի անվանումը | *ՀՀ կառավարություն* | | |
| Արդյունքի չափորոշիչներ | | | |
| Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ) | | *(25,000.0)* | *(25,000.0)* |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 9 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 9.8 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն**

**ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

| **Ծրագրի դասիչը** | **Ծրագրի անվանումը** |
|---|---|
| *1212* | Տարածքային զարգացում |

**Ծրագրի միջոցառումները**

| Ծրագրի դասիչը | *1212* | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) | |
|---|---|---|---|
| Միջոցառման դասիչը | *12013* | ինն ամիս | տարի |
| Միջոցառման անվանումը | *Հրեփակոծության հետևանքով հասցված վնասների փոխհատուցում* | | |
| Նկարագրությունը | *Հրեփակոծության հետևանքով ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներին (բնակիչներին) հասցված վնասների փոխհատուցում* | | |
| Միջոցառման տեսակը | *Տրանսֆերտների տրամադրում* | | |
| Շահառուների ընտրության չափանիշները | *ՀՀ համայնքներ (բնակիչներ)* | | |
| Արդյունքի չափորոշիչներ | | | |
| Համայնքների թիվ, հատ | | 5 | 5 |
| Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ) | | *25,000.0* | *25,000.0* |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

1237 (1)

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2020 թվականի
հուլիսի 23-ի N 1237 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 9.1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 9.1.58 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՀՀ կառավարություն**

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| **Ծրագրի դասիչը** | **Ծրագրի անվանումը** |
|---|---|
| *1139* | *ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ* |

**Ծրագրի միջոցառումները**

| Ծրագրի դասիչը | *1139* | Ցուցանիշների փոփոխությունը (նվազեցումները նշված են փակագծերում) | |
|---|---|---|---|
| Միջոցառման դասիչը | *11001* | ինն ամիս | տարի |
| Միջոցառման անվանումը | *ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ* | | |
| Նկարագրությունը | *ՀՀ պետական բյուջեում նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման՝ պետական բյուջեում չկանխատեսված ելքերի, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի ֆինանսավորման ապահովում* | | |
| Միջոցառման տեսակը | *Ծառայությունների մատուցում* | | |
| Միջոցառումն իրականացնողի անվանումը | *ՀՀ կառավարություն* | | |
| | Արդյունքի չափորոշիչներ | | |
| Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ) | | *(25,000.0)* | *(25,000.0)* |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ

N 9.1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 9.1.57 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**ՀՀ Տավուշի մարզպետարան**

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| **Ծրագրի դասիչը** | **Ծրագրի անվանումը** |
|---|---|
| *1212* | *Տարածքային զարգացում* |

**Ծրագրի միջոցառումները**

| Ծրագրի դասիչը | *1212* | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) | |
|---|---|---|---|
| Միջոցառման դասիչը | *12013* | ինն ամիս | տարի |
| Միջոցառման անվանումը | *Հրետակոծության հետևանքով հասցված վնասների փոխհատուցում* | | |
| Նկարագրությունը | *Հրետակոծության հետևանքով ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներին (բնակիչներին) հասցված վնասների փոխհատուցում* | | |
| Միջոցառման տեսակը | *Տրանսֆերտների տրամադրում* | | |
| Շահառուների ընտրության չափանիշները | *ՀՀ համայնքներ (բնակիչներ)* | | |
| Արդյունքի չափորոշիչներ | | | |
| Համայնքների թիվ, հատ | | 5 | 5 |
| Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ) | | *25,000.0* | *25,000.0* |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ



Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

1237 (1)